բայրիկը այս վանքերի հետ կապ չունէր։

Սակայն երկար չէ մնում աւետարանը իւր տեղում, այլ եւ ընդամէնը տասն եւ մէկ տարի. ոմն Սարգիս քահանայ (Ձեռ. 349ա. Ցիշ. 2) «գտեալ զսա ի գաւառին Անոյ» գնում է և նուիրում «Մեծ կողմանց եպիսկոպոսարանիս, որ է իւր տեղի սնընդեան» ստանալով տարին երկու ժամ Ս. Սարգսի տօնին, «ի թուականութեանս։ ՈՀԲ։ ի յիշխանութեան հզաւրին Հասանայ որդոյ Վախտանգայ, և հայրապետութեան տն. Յոհաննիսին»։ Աւետարանի անմիջական գրողն և Անիի շրջանից բերողն է ոմն Մխիթար։

Մեծկողմանց կամ Մեծկուենից եպիսկոպոսարանը մէկն է Արցախի հնագոյն հոգևոր կեդրոններից, որ Զ. Դարից սկսած որոշ դեր է կատարել Աղուանից իշխանութեան մէջ։ Ցիշատակարանի Վախտանգայ որդի հզօր Հասանը, ոչ այլ ոք է, բայց եթէ Հասան-Ջալալ-Դաւլէ կոչուածը, Դանձասարի շինողն ու Զաքարէ եւ Իւանէ սպասալարների Խորիշահ քրոջ որդին։ Այս խնդիրը մեզ համար պարզուած է յատուկ ուսումնասիրութեամբ, որ այստեղ կրկնել հնարաւոր չէ, միաժամանակ, վերին Խաչենում էլ ապրում էր ԺԳ. դարի երկրորդ տասնամեակում նոյն անունով եւ հայրանունով մի այլ իշխան։

Ցիշատակարանները ցոյց են տալիս, որ աւետարանը երկար ժամանակ մնացել է Մեծկողմանց եպիսկոպոսարանում. տէր վանականը ՁՀԴ = 1325 թուին նորոգել է տալիս ի յիշատակ իւր ծնողների և եղբայրների, կազմողն է Ստեփանոս քահանան (Ցիշ. 13)։

Ապա 1325-1383 թ. թ. Սաղմոսիկ քահանան գրել է իւր յիշատակարանը (14), խնդրելով յիշել Մուսայէլ և Սաղադիէլ որդիներին. յիշատակարանը թուական չունի, բայց ՊԼԲ=1383 թուին Մովսէս քահանայի յիշատակարանն է գրուած (15), ուր ի միջի այլոց յիշել է խնդրում «և զհայրն իմ զՍաղմոսիկ քհ.»։ Մովսէս քահանայի այս յիշատակարանի «պարոն Ջալալ»ը որի իշխանութեան մէջն է Մեծակողմանց եպիսկոպոսարանը, Դանձասարի գաւթի մէջ թաղուած նոյնանուն իշխանն է. «Այս է հանգիստ մեծին Ջալալի յաղաւթս յիշեցէք. թվ. ՊՁԵ». արձանագրութիւնների մէջ յիշւում են «Պաստամ որդի մեծի Ջալալին», ՋԻ=1471 և ապա ՋԽԲ= 1493 թուին «Տուրսուն թոռն մեծի Ջալալին»(*)։

Զորս տարի յետոյ՝ ՊԼՁ=1387 թուին գրուած է մի ուրիշ յիշատակարան նոյն Մովսէս քահանայի անուան հետ կապուած (16). Ովանէս և Թանգուզ ամուսինները սրտի յօժարութեամբ իրենց Մարգարէ որդւոյն տալիս են ցմահ որդեգրութեան Մովսէս քահանային, որպէսզի նա երէց անել տայ, վկայութեամբ Աբուկանայ Ալփիկայ որդու և Լարեցի Խոչոտայ որդի Բեկիկի։ Նոյն յիշատակարանին կից գրուած է մի ուրիշը (17), որով Մայլիքայ որդի Սարխութան միաբանում է սուրբ աւետարանին եւ իւր էսան աղջկան տալիս նոյն Մովսէս քահանային։ Կենցաղական նշանակութիւն ունեցող յիշատակարաններ, հաւանօրէն մեռել է Մովսէս քահանայի Վարդան որդին և նա որդեգրել է յիշեալ տղային և աղջկան։

Թուականով վերջին յիշատակարանը ՋԽԶ=1497 թուից է (18), երբ պարոն Ուլուխաթունը «յոյժ հնացեալ» աւետարանը նորոգել է տալիս, երբ Թավրէզ էր եկել Մատխանը։

Անթուական մի յիշատակարան ևս ունինք ոմն Շնահաւորիկի կողմից (19), որով յայտնում է, թէ միաբանել է «սբ. ուխտիս Մեծ կողմանց աթոռոյս», եւ ժամանակով Մովսէս քահանայից շատ հեռու չպէտք է լինի։

Աւետարանը էջմիածին է բերուած Դանձակի Գետաշէն գիւղից մեր ձեռքով և այժմ գտնւում է Ձեռագրատանը։

Ը.

Սահակ կրօնաւորի մեծ յիշատակարանից տեղեկանում ենք (1), որ Ձեռագիրը գրուած է «ի սբ. ուխտս Հաղբատայ» «ձեռամբ Յակովբայ», բայց գրիչն ինքն էլ ունի կարճ յիշատակութիւններ իւր մասին, ինչպէս Մարկոսի 173ա և Յովհաննու

(*) Բարխուդարեան, Արցախ 176. 178։ Ջալալի հանգստեան արձանագրութեան թուականը ըստ Բարխուդարեանի ՊԶ. է, իսկ մեր նկատողութեան տետրակում վերի թուականն ենք նշանակել, բայց, գուցէ, վերջին է-ն, էական բայն է և բուն թուականը «ՊԶ»։